1.3. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները:

1.4. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ն համաձայն հրավերի ներկայացրել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 18 702 000 (տասնութ միլիոն յոթ հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ:

1.6. «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.7. «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները:

1.8. «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ-ն հրավերով ներկայացրել է հրավերի փաստաթղթերի միայն բնօրինակը, չներկայացնելով հրավերով պահանջվող բնօրինակների պատճենները:

1.9. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 16 000 000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ:

1.10. «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարների մեջ,(բնօրինակը և պատճենը առանձին ծրարների մեջ), ծրարների վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեն:

1.11. «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները:

1.12. «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն: